

«ՀՈԿՏԵԼԲԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ», Հոդվածների ժողովածու, ՀՍՍՀ
ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, 426 էջ, գինը 1 ո. 56 և.

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հայ գրականությունը, որ երկար ու ձիգ դարերի ճամփա էր անցել, մտավ զարգացման նոր փուլ, հայ գրականության պատմության մեջ սկսվեց նոր՝ սովետահայ գրականության շրջանը։ Սովետահայ գրականության սկզբնավորման ու զարգացման, նրա գեղարվեստական մեթոդի, սովետական բազմազգ գրականությունների հետ նրա ունեցած գաղափարական միասնության խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ անցած տասնամյակներում հայ գրականագետները զգալի աշխատանք են կատարել։ Այս խնդիրների մեկնաբանությանն է նվիրված նաև «Հոկտեմբերը և հայ գրականությունը» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն, որը տպագրության է պատրաստել ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը։

Ժողովածուն հարուստ է ու բազմազան՝ նյութերի ընդգրկմամբ։ Նրա առաջին բաժինը կազմում են այն հոդվածները, որոնցում քննության են առնվում Հոկտեմբերյան հեղափոխության և հայ ժողովրդի պատմական ճակատագրի, հեղափոխության ու հայ գրականության առնչությունները։ Էդ. Թոփչյանի «Հոկտեմբերը և հայ գրականությունը» հոդվածում ընդգծվում է այն վրձնական ու բախտորոշ նշանակությունը, որ ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից փրկելու և ազգային վերածննդի հնարավորություն տալու գործում, ընդհանուր գծերով բնութագրվում է սովետահայ գրականության անցած ուղին 1920-ական թթ. մինչև այսօր։

Վ. Մնացականյանը «Մեծ նախապատմություն» հոդվածում տալիս է հայ հասարակական մտքի նախահոկտեմբերյան հարյուրամյակի համառոտ նկարագիրը։ Հայ ժողովրդի սոցիալական և ազգային-ազատագրական պայքարը բոլորովին ուրիշ ծավալ ու խորություն, մասսայականություն ու հեռանկար ստացավ, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին։ Պատմական այդ տարեթիվից հետո հայ հասարակական առաջավոր միտքը հնարավորություն ունեցավ անմիջական

շփման մեջ մտնելու հեղափոխականացող Ռուսաստանի հետ և հայ ժողովրդի փրկության նոր ուղիներ որոնելու։ Գնահատելով XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին երկու տասնամյակի հայ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների և ուղղությունների պատկանող մի շարք գործիչների, Վ. Մնացականյանը եզրակացնում է. «Որքան էլ խճճված լինեն դեպքերը, իսկ ուղիները՝ բարդ ու հակասական, որքան էլ շատ լինեն հայ ժողովրդի տված զոհերը և նրա խորտակված երազանքները, միևնույն է՝ նրա առաջավոր միտքը անխուսափելիորեն պետք է բերեր և բերեց Հոկտեմբերյան հեղափոխության ընդունմանը։ Դա ոչ թե պատահականություն, այլ պատմության տրամաբանությունը ենթարկված հայ ժողովրդի, նրա բազմադարյան մշակույթի և փայլուն անմահությունների հիշատակի ճակատագիրն է» (էջ 56)։

Հայ ժողովրդին, որ ուժասպառ էր եղել պատերազմներից ու ավերածություններից, մոտ ու հարազատ էին Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները։ Դեռևս կոմունիստական շարժման արշալույսին հայ ժողովրդի զավակներից շատերը զինվորագրվել էին լենինյան բանակին, հարազատ ժողովրդի ազատությունը կապելով Ռուսաստանի բանվորական շարժման, պրոլետարական հեղափոխության հաղթանակի հետ։ Հայ գրականության մեջ նույնպես հեղափոխության գաղափարները, դեռևս 1917 թ. հոկտեմբերից առաջ, ստեղծել էին որոշակի տրագիկաներ։ Հեղափոխական մոտիվների մունետիկը մեզանում Հակոբ Հակոբյանն էր, որ քարոզում էր սոցիալիզմի ճշմարտությունը, երգում ճնշված ու կեղծված բանվորության երգը։ Բանվոր դասակարգի պայքարը, բացի Հակոբ Հակոբյանից, ոգեշնչել է նաև հայ դասական գրականության ուրիշ շատ ներկայացուցիչներին։

Նրբ Ռուսաստանում հաղթանակեց սոցիալիստական հեղափոխությունը, հայ գրեթե բոլոր խոշոր գեմոկրատ գրողները զգացին, որ այդ հեղափոխությունը ոչ միայն փրկում է աշխատավոր մարդուն իր դարավոր կապանքներից, այլև ազատություն է բերում Ռուսաստանի բոլոր ճնշված փոքր ազգություններին, այդ թվում և

հայ ժողովրդին, Հայ գրականության հետհեղինակության շրջանի պատմության մեջ առանձին կարևորություն է ներկայացնում պրոլետարական շարժման հետ չկապված գրական մտավորականության՝ ղեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը և սովետական կարգերը կատարած շրջադարձի հարցը, որին և նվիրված է հանգուցյալ գրականագետ Ա. Ասատրյանի «Հայ գրողները և հեղափոխությունը» հոդվածը:

Հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչների գաղափարական-քաղաքական էվոլյուցիան դժվարին ընթացք է ունեցել: Նրանցից բոլորը չէին, որ անմիջապես կողմնորոշվեցին ղեպի աշխարհը ցնցած հեղափոխությունը: Բայց փաստ է, որ հայ գրականության ու արվեստի գործիչների մեծագույն մասը տարրեր ուղիներով, տարրեր ժամանակներում և ամեն սեկրյուրովի շրջադարձ կատարեցին ղեպի Հոկտեմբերը և նրա ծնունդ հանդիսացող Սովետական Հայաստանը:

Հովհ. Հովհաննիսյանից հետո դարասկզբի գրողներից առաջինը Հովհ. Թումանյանն է խորապես ըմբռնում Հոկտեմբերյան հեղափոխության և նրա հաղթանակով վերափոխված նոր, Սովետական Ռուսաստանի բախտորոշ դերը ժողովուրդների կյանքում: Մեծանուն բանաստեղծը, որ մասնավոր սեփականատիրական աշխարհում չէր գտել իր որոնած մեծ ճշմարտությունը՝ ազգերի համեմատություն, իսկական մարդասիրություն, խաղաղ ստեղծագործ կյանք, խանդավառությամբ ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, անդրկովկասյան ժողովուրդներին, ինչպես և հայ ժողովրդի ապագան կապելով սովետական իշխանության հետ:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը խանդավառությամբ ընդունեց հայ դասական ռեալիզմի մեծագույն ներկայացուցիչ Ալեքսանդր Շիրվանզադեն: Նա տեսավ Հոկտեմբերի գրոշով փրկված Հայաստանը, տեսավ ու համոզվեց, որ հայր Սովետական Միությունից դուրս երբեք չի կարող ապրել այնպես ազատ և ստեղծագործել այնպես անկաշկանդ, ինչպես իր նորաստեղծ հայրենիքում:

Հովհաննես Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Նար-Գոսի, Շիրվանզադեի և ուրիշների նման ղեպի նոր Հայաստանը կողմնորոշվեց նաև Ավետիք Բասակյանը:

Դեռևս 1921 թ. հուլիսին Հովհ. Թումանյանին ուղղած նամակում Ավետիք Բասակյանը հայրենիք վերադառնալու ցանկություն է հայտնում և հետո, անդրադառնալով հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ եվրոպական պետությունների վարած քաղաքականությանը, գրում է. «Եվրոպան ոչ միայն չի օգնում մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան հա-

մոզված եմ փաստերից: Ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դժան գտնվեցին, ինչքան Գերմանիան: Քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու այրում. պետք է երևա դարձնել այդ ավազակներից և մոտենալ Ռուսաստանին... Ըստ իս Հայաստան և հայ ժողովուրդ կարող է ապրել միայն Ռուսաստանի հետ, կամ ընավ չի կարող ապրել...»:

Շիրվանզադեի և Ավ. Բասակյանի հայրենադարձությամբ սփյուռքի հայ առաջադեմ մտավորականության մեջ ուժեղացավ համակրանքը Սովետական Միության, մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ: Նրանցից ոմանք (Ջ. Նսայան, Վ. Թոթովենց) վերադարձան հայրենիք և իրենց տաղանդը ներդրեցին սովետահայ գրականության դարգացման գործում, իսկ «սոցիալական դավանանքով և ստեղծագործության հիմնական մոտիվներով ու գաղափարական բովանդակությամբ պրոլետարիատի պայքարից հեռու կանգնած ավագ սերնդի մի շարք անվանի գրողներ շրջադարձ կատարեցին, կանգնեցին սովետական օրինակագիտության դիրքերում» (էջ 79): Այդ գրողների ու մտավորականների մեջ էին Տիգրան Կամսարականն ու Սրվանդ Օտյանը, Արշակ Զոպանյանն ու Վահան Թեքեյանը, Լևոն Բաշալյանն ու Վահան Մալեգյանը. Ռուբեն Որբերյանն ու էդուարդ Գոյանճյանը, Սիպիլն ու Անայիսը, Զարուհի Գալեմբերյանն ու Զարուհի Պահրին, Լևոն Մեսրոպն ու Լենովը Արմենը:

Այս գրողները, որ հրաշքով կարողացել էին փրկվել թուրքական յաթաղանից, մեծ դեր խաղացին սփյուռքահայ գրական առաջին սերնդի՝ թուրքական կոտորածներից աշխարհով մեկ ցրված հայության բեկորներից ծնունդ առած «Անապատի սերունդի» գաղափարական կազմավորման գործում: «Անապատի սերունդը» և համաշխարհային երկրորդ պատերազմից հետո հանդես եկած սերունդը մշակեցին սփյուռքահայ գրականության հիմնական գծերը, քաղաքացիական զոյության իրավունք տալով «Սփյուռքահայ գրականություն» հասկացությանը: Սփյուռքահայ գրականության առաջին ներկայացուցիչների (Կ. Սիտալ, Շ. Շահնուր, Վ. Շուշանյան, Լաս—Լուիզա Ասլանյան, Միսաք Մանուշյան, Ա. Սեմա, Հրաչ Զարդարյան և այլն) ստեղծագործության զնահատմանն է նվիրված Գ. Սևանի «Հոկտեմբերը և սփյուռքահայ գրականությունը» հոդվածը:

Հովհ. Ղազարյանի «Սոցիալիստական ռեալիզմը և պատմական ճշմարտությունը» և Ս. Գաբրիելյանի «Սոցիալիստական ազգերի գրականության միասնությունը» հոդվածներում վեր է հանվում այն բարբարա ազդեցությունը, որ ունեցել

է Հոկտեմբերյան հեղափոխությունը անցյալից եկած յայ գրողների աշխարհայացքի լայնացման, պատմական ճշմարտության դիալեկտիկական մեկնարանության խորացման գործում, հայ դրականության մեջ ինտերնացիոնալիստական գաղափարների ամրապնդման, գրական կապերի ուժեղացման, ստեղծագործական փոխադարձ ազդեցության ու հարստացման ասպարեզում: Ուսկայն հարկ ենք համարում նշել, որ Ս. Դարոնյանի էական խնդիր աքժարծող հողվածը շատ է հակիրճ, իսկ Հովհ. Ղազարյանը սոցիալիստական ռեալիզմի առանձնահատկությունների հարցը աշխատում է բացատրել միայն հատուկ կենտ ստեղծագործությունների հիման վրա, տեսադաշտից դուրս թողնելով այդ մեթոդի առավել նշանակալից երկերը:

Ժողովածուի երկրորդ բաժնի ուսումնասիրությունները նվիրված են սոցիալիստական ռեալիզմի գրականության սկզբնավորողների (Վ. Տերյան, Հ. Հակոբյան, Ե. Զարենց, Այ. Մյասնիկյան) գրական ժառանգության քննությանը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը ցնծազին ուրախությամբ ընդունեց հայ դասական քնարերգության մեծ վարպետ Վահան Տերյանը: Նա սիրով զինվորագրվեց լենինյան գործին, ընդունվեց կոմունիստական կուսակցության շարքերը, պայքարեց Հոկտեմբերի հաղթանակի համար ու դարձավ հասարակական-քաղաքական ակնազուր գործիչ: Հեղափոխությունից հետո իր պրակտիկ քաղաքական աշխատանքին զուգընթաց բանաստեղծը մարքսիստական պրոպագանդիստական հանրամատչելի բրոշյուրներ է շարադրում («ԲՆՆՆ է ասում լենինը գյուղացիներին», «Սամակներ հայ գյուղացիներին»), որոնց մեջ աշխատավորներին բացատրում է սովետական իշխանության, կոմունիստական կուսակցության նպատակները, քաղաքականությունը, հայերեն թարգմանում լենինի «Պետություն և հեղափոխություն» և «Կարլ Մարքսի կենսագրությունը» աշխատությունները:

«Մթնշաղից մինչև հեղափոխության մրրկահավր» ուսումնասիրության մեջ Վ. Պարտիզունին հանգամանորեն քննության է առնում ստեղծագործական այն ընթացքը, որը Վ. Տերյանին բերել է դեպի Հոկտեմբերը: Հողվածում բազմաթիվ փաստերի և Տերյանի տարբեր տարիներին գրած ստեղծագործությունների մանրակրկիտ վերլուծությամբ մերժվում է այն տեսակետը, ըստ որի Տերյանը ներկայացվել է իբրև սոսկ անդորր ու թախծոտ տրամադրությունների, աշնան ու տերեվաթափի երգիչ, և ցույց է տրվում Տերյանի հոկտեմբերյան երգերի և բանաստեղծական մյուս շարքերի անխզելի կապը:

«Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունը և գեղարվեստական մեթոդի պրոբլեմները» հող-
21 Հանդես, № 2—3

վածում է. Հարությունյանը, նշելով այն առանձնակի տեղը, որ հայ դրականության մեջ ունի Հ. Հակոբյանը, անդրադառնում է հայ դասական պոեզիայի ավանդների (Թումանյան, Իսահակյան) հետ պրոլետարական բանաստեղծի ունեցած առնչությունների հարցին, փորձում է բացատրել նրա գեղարվեստական մեթոդի առանձնահատկությունները: Հողվածի հեղինակը կարծիքով Հակոբ Հակոբյանի բացառիկ ծառայությունը հայ գրականությանը այն է, որ մշակեց և զարգացրեց հեղափոխական ոտմանտիզմը, առաջ քաշեց ժամանակաշրջանի սոցիալական կարևորագույն հարցեր, ստեղծեց լիրիկական հերոսի՝ սոցիալիզմի մարտիկի հերոսական կերպարը. սրանով նա ոչ միայն առաջին պլան բերեց աշխատանքի մարդուն, բանվորին, այլև ազատ աշխատանքի գաղափարը՝ պրոլետարական աշխատանքային կուլտուրայի էությունից (էջ 229): Զուգահեռներ անցկացնելով Հ. Հակոբյանի և հայկական պոեզիայի ուրիշ ներկայացուցիչների (Իսահակյան, Տերյան) ոտմանտիզմի միջև, ցույց տալով նրանց տարբերությունները, է. Հարությունյանը հանգում է այն եզրակացության, որ հայ գրականության մեջ Հակոբյանի ոտմանտիզմն է եղել սոցիալիստական ռեալիզմի տանող ճանապարհը: Զի կարելի չհամաձայնել հողվածի հեղինակի այն մտքին, որ ինչպես ընդ առավոտ, «Կարմիր ալիքներ», այնպես էլ սովետական ժամանակաշրջանում Հ. Հակոբյանի ստեղծած պոեմներում զգացվում է պրոլետարական պոեզիայի գեղարվեստական հրեշտավորությունների պակաս, որ այդ գործերը չեն բարձրանում սոցիալիստական ռեալիզմի աստիճանին՝ այդ մեթոդի էության առումով: «Որքան էլ ներշնչված բանաստեղծը ձգտում էր հեղինակի վրա իջեցնել իր պոեզիան, այնուամենայնիվ զա նրան չէր հաջողվում: Ավելի ուժեղ էր ոտմանտիզմը» (էջ 230): Զի կարելի սակայն համաձայնել հեղինակի այս տողերին անմիջապես հետևող շատ անհամոզիչ այն պնդման հետ, թե «Հակոբյանի ոտմանտիզմի և Թումանյանի ռեալիզմի սինթեզողը եղավ Ե. Զարենցը»:

Հակոբ Հակոբյանի ոտմանտիզմի համեմատությամբ նոր որակ էր նշել Զարենցի հեղափոխական պոեզիան, որի քննության է նվիրված Ա. Իրիգորյանի «Բանաստեղծը և հեղափոխությունը» հողվածը: Ե. Զարենցի պոեզիայում հեղափոխությունը հենց սկզբից («Սոմա», «Ամբոխները խելագարված») հանդես է գալիս իբրև անհունորեն լիրիկական, անձնական թեմա, տեղի է ունենում ռեալիստականի ու ոտմանտիկականի բարդ միահյուսում: Հեղափոխական աշխարհայացքն ու կիրքը ծնել են նոր պոետիկա, բանաստեղծական նոր մտածողություն: Բանաստեղծական բարձր հուզում, հեղափոխական կր-

քոտություն, լիրիկական թախիժ, կենսականորեն ճշմարտացի հիպերբոլիկություն, բանաստեղծական մտածողության խորություն,—ահա այն գրածերը, որ տեսնում է Ա. Գրիգորյանը Ե. Չարենցի «Սոմա»։ «Ամբոխները խելագարված», «Նաիրի երկրից» պոեմներում։ Մեծատաղանդ բանաստեղծը յուրաքանչյուր անգամ անդրադառնալով հեղափոխությանը, ոչ միայն զեղարվեստական եւր արտահայտչամիջոցներ է գտնել այդ թեման մարմնավորելու համար, այլև նոր կողմից է բացահայտել, հետաքրքիր ու ինքնատիպ լուծում տալով թեմային։ «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Երգ ժողովրդի մասին», «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի», «Ամենապոեմ», «Չարենց-նամե» պոեմների և հեղափոխության թեմայով գրված այլ գործերի գաղափարական ու գեղագիտական վերլուծությամբ Ա. Գրիգորյանը դնում է Չարենցի ստեղծագործության վերընթաց ուղին 1920-ական թթ.։

Չարենցի ստեղծագործության մեջ ուղղակիորեն հեղափոխության թեմային էր առնչվում Լենինի կերպարի ստեղծման խնդիրը, որին, ինչպես նշում է Ա. Գրիգորյանը, բանաստեղծը տրվեց իր զարմանալի, հրաշալի տաղանդի ամբողջ ուժը։ Եթե 1918 թվականի պոեմներում,—գրքում է Ա. Գրիգորյանը,—չնայած ընդհանուր հեղափոխական միտումին, խիստ զգացվում էր տարերային, ոռոմանտիկ բողոքի, սուր հիպերբոլիկության, սիմվոլիկայի տարր, ապա Վլադիմիր Իլյին Լենինի մասին գրած երկերում, որոնք ստեղծված են 1924—1925 թվականներին, թե՛ ունիղվել, թե՛ ոռոմանտիկան հասնում են նոր որակի... Չարենցը Լենինյան իր անմահ երկերում վերաստեղծում է Վլադիմիր Իլյին Լենինի կերպարը ամենանուրբ, աներևակայելի մանրամասներով, գեղարվեստական ու կենսական զարմանալի վավերականությամբ» (էջ 261—262)։

Հայ մարքսիստական քննադատության, սոցիալիստական շինարարության մեջ հայ ժողովրդի առաջին նվաճումների, սովետահայ գրականության ու մշակույթի ստեղծման ու զարգացման պատմության հետ շատ բանով է կապված Ալեքսանդր Մյասնիկյանի՝ (Մարտունու) առումը։ Դեռևս հեղափոխությունից առաջ Ա. Մյասնիկյանը իր տարրեր բնույթի աշխատություններում ու հողվածներում անդրադարձել է գրականության, արվեստի, կրթության ու լուսականության հարցերին։ Կանգնած լինելով գրականության կուսակցականության ու ժողովրդայնության Լենինյան դիրքերում, նա դատապարտում է «արվեստը արվեստի համար» տեսությունը և ընդգծում գրականության ու արվեստի դասակարգային բնույթը, ճանաչողական դերն ու հասարակական վերափոխիչ նշանակությունը։

Մյասնիկյանի նախահոկտեմբերյան շրջանի գրքային ադատական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Մ. Նալբանդյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Մատուրյանի, Հ. Թումանյանի ստեղծագործությունները գնահատող նկատողությունները, հողվածներն ու գրախոսությունները, որոնց մեջ արժարծվում են կյանքի հետ դրականության կապի, դասական արժեքների նկատմամբ ունենալիք վերարժեքների իրենդիրները։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո էլ նա, չնայած մեծ գրողվածություն, ուշադրությունը երբեք չի կտրել գրականության, արվեստի, մշակույթի հարցերից։ Այս մասին է պատմում Ս. Մանուկյանի «Ալ. Մյասնիկյանի հոկտեմբերյան գրքային ադատական ժառանգությունը» հողվածը։ «Մեծ նշանակություն տալով ժողովրդի գեղագիտական-հոգևոր զարգացման գործում անցյալի մշակութային արժեքների դերին,—գրում է Ս. Մանուկյանը,—մարքսիստ քննադատը գրականության ու արվեստի խոր իմացությունը, բոլոր ժամանակների և ժողովուրդների մշակույթի իսկական վարպետների ավանդների ստեղծագործական յուրացումը դիտում էր որպես նոր, սոցիալիստական կուլտուրայի կառուցման կարևոր նախապայման»։ Այս տեսակետի կարևորությունը հատկապես ընդգծվում է, եթե նկատի ենք առնում, որ դա արտահայտված է այն ժամանակաշրջանում, երբ նոր մշակույթի կառուցման ուղիների և զարգացման հեռանկարների շուրջը եղած բուռն բանավեճերի ու սուր պայքարի պայմաններում դրսևորվում էին անցյալի հոգևոր և մտավոր ժառանգությունից հրաժարվելու, հնից եկած ամեն ինչ ժխտելու տենդենցները։ Այդ ժամանակաշրջանում է, որ Մյասնիկյանը վերանայում ու առանձին գրքուկով վերահրատարակում է «Միքայել Նալբանդյան. նկատողություններ» ուսումնասիրությունը, գրական խոսք առնում ն. Արովյանի, Լ'աֆֆու, Պատկանյանի, Հովհ. Թումանյանի և հայ ուրիշ գրողների մասին։

Ս. Մանուկյանը հանդամանորեն վերլուծում է Ա. Մյասնիկյանի «Գրական քննադատության մեթոդի մասին», «Պրոլետարական գրականությունը նվիրված «Մուրճ» ամսագրի N 1-ի առթիվ» հողվածները, որոնց մեջ մարքսիստ քննադատը պահանջում է վերլուծության, քննության ու գրնահատման ուրույն չափանիշներով մոտենալ գրականությանն ու արվեստին՝ հասարակական կյանքի արտացոլման այդ առանձնահատուկ ձևովերին, արժարծում է նորաստեղծ հայ գրականության թեմատիկայի, սովետահայ գրականության ու գրականագիտության զարգացման խնդիրները։

«Հոկտեմբերը և հայ գրականությունը» թեման չի սպառվում այն ազդեցությամբ, որ հեղափո-

խությունը ունեցել է մեր գրականության թեմատիկայի լայնացման, զաղափարական բովանդակության խորացման ուղղությամբ: Հոկտեմբերի զաղափարների շնորհիվ գրականության ձևը լերած նոր բովանդակության ազդեցության տակ ներբուստ վերակառուցվել և դարձացման նոր ուղիներով են ընթացել նաև գրական ժանրերը, էական փոփոխություններ են կատարվել նրանց մեջ: Գրական մի շարք ժանրերի ու տեսակների այդ ներքին փոփոխությունների բացահայտման են նվիրված «Հոկտեմբերը և հայ գրականությունը» ժողովածուի երրորդ բաժնի նյութերը:

«Նոր իրականությունը և պատմավեպի ճակատագիրը» ուսումնասիրության մեջ Վ. Նալբանդյանը համառոտակի շարադրելով պատմավեպի զարգացման պատմությունը, ցույց է տալիս, թե ինչպես հասարակական տարրեր ժամանակաշրջաններում նոր ու տարրեր բնույթ է ունեցել պատմական իրադարձությունների նկատմամբ եղած մոտեցումը, պատմական անցյալի գնահատության հայեցակետը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ նոր ժամանակների ամենավիթխարի իրադարձությունն էր, լայն հնարավորություններ ընձեռեց նոր ձևով քննելու անցյալը, «հանուն ներկայի ու ապագայի հեռանկարների իմաստավորելու նախորդ սերունդների կյանքը, կոհհանում ժողովրդի հավերժության, նրա աշխարհաստեղծ ուժի զաղտնիքը, ավելի պարզ տեսնելու և պատկերելու ժողովրդական հոծ մասսաների հեղափոխական և հայրենասիրական վիթխարի խոյանքները՝ զարբերի մշուշով ծածկված անցյալի մոայլ էջերում» (էջ 310): Անդրադառնալով պատմական վեպի շուրջը 1920—30-ական թթ. և հետագա տարիներին եղած բանավեճներին, պատմական անցյալի պատկերման վերաբերյալ սովետական գրականագիտության մեջ արտահայտված մի շարք տեսակետների, Վ. Նալբանդյանը ուս սովետական, ինչպես նաև սովետահայ պատմավեպի անցած ուղու օրինակներով արծարծում է գրական այդ ժանրի տեսության համար հետաքրքրություն ներկայացնող, նրա ընթացքն ու հեռանկարները որոշելու իմաստով էական նշանակություն ունեցող հարցեր ու խնդիրներ: Հոգվածում առանձնակի ուշադրություն է դարձվում պատմավեպասանության մեջ անցյալի ու արդիականության փոխհարաբերության, պատմականության սկզբունքի բացահայտման վրա: «Պատմավեպում,— գրում է Վ. Նալբանդյանը,— անտարակույս, առկա է արդիական ոգին, սակայն նա առկա է ոչ իբրև իրականություն, ոչ որպես մեխանիկական միացումի կամ «սինթեզի» բաղադրիչ մի մաս, այլ իբրև ստեղծագործության մեջ արտացոլվող միակ օբյեկտ»:

Երբ պատմական իրականության ղեկավարությամբ մեկնաբանության հայեցակետ, իբրև պատմական կոնցեպցիա» (ընդգծումները հեղինակին են—Ա. Ա.յս):

Էդ. Ջրբաշյանի «Բանաստեղծական էպոսի նոր ուղիները» հոգվածը նվիրված է պոեզիայի էպիկական ձևերի (պոեմ, բալլադ) մեջ 1920-ական թթ. տեղի ունեցած ներքին վերափոխումներին քննությանը: Ի. Չարենցի, Հ. Հակոբյանի, Ն. Չարյանի և այլ բանաստեղծների հետհոկտեմբերյան առաջին տասնամյակում ստեղծած չափածո մեծ կտավների վերլուծությամբ Էդ. Ջրբաշյանը ցույց է տալիս, որ գրական այդ ձևերը ամենից առաջ սերտորեն կապվեցին հեղափոխական դարաշրջանի հետ, դարձան նրա ոգու և ձգտումների առավել բնորոշ արտահայտությունները: Հեղափոխական զեպերի ու զեմբերի էպիկական պատկերմանը դուրսբաց, պոեզիայի խոշոր ձևերը դիմեցին նաև արդիական թեմաներին, սոցիալիստական շինարարության առաջին փաստերը դիտելով իբրև հեղափոխական մարտերի անմիջական շարունակություն, իբրև հերոսական սխրագործություն: 20-ական թթ. պոեմների և բալլադների, հատկապես Ե. Չարենցի համապատասխան երկերի վերլուծությամբ հեղինակը բացահայտում է այն էական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան ոչ միայն բանաստեղծական հիշյալ ժանրերի բովանդակության, թեմատիկայի մեջ, այլև նրանց կոնֆլիկտի, կառուցվածքի և արտահայտչամիջոցների մեջ: Ջրբաշյանը այդ փոփոխությունները դիտում է հայ դասական պոեզիայի ֆոնի վրա, ցույց տալով և՛ անցյալին կապող գծերը, և՛ այն նորը, որ արդյունք է սոցիալիստական իրականության: Նշելով հետհոկտեմբերյան առաջին տասնամյակի գրականության մեջ հանդես եկած ծայրահեղություններն ու թուլությունները (անհատի հոգեբանությունը եկոլեկտիվ հոգեբանության» մեջ տարրալուծելու միտումները, հերոսի անձնական կյանքի և աշխատանքային գործունեության ուղղագիծ հակադրումը, ստեղծագործության վերացական, «կոսմիկական» ձևերով հրապուրվելը, անցյալի զեղարվեստական ժառանգության նկատմամբ ժխտողական մոտեցումը և այլն), Էդ. Ջրբաշյանը իրավացիորեն 20-ական թթ. գրականության համար հատկանշական է համարում ոչ թե այդ ծայրահեղությունները, այլ հեղափոխական մեծ պաթոսը, բովանդակության լայնությունը, զեղարվեստական շատ բարձր ուժերի մեջ մտած արժատական նորամուծությունները: 1920-ական թթ. բանաստեղծական էպոսը, ինչպես և գրականությունը ամբողջությամբ վերցրած, զեղադիտորեն հաստատում էր հեղափոխության գործի արդարությունը, հեղափոխական վերափոխությունների

նորոգիչ մեծ ուժը: Նրանում տիրապետում էր նորի ստեղծման ու ներկործանման խանդավառության, մասսաների հեղափոխական հորդության փառալանման պաթոսը:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո, գրական մյուս ժանրերի հետ միասին, զարգացման նոր ասպարեզ դուրս եկավ նաև հայ վիպասանությունը: Սովետահայ վեպի անցած բարդ ու դժվարին ուղու համառոտ ուրվագիծն է տրված Ս. Աղարարյանի հոդվածում: Սովետահայ վեպի զարգացումը քննության առնելով ըստ տասնամյա ժամանակաշրջանների, Ս. Աղարարյանը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր տասնամյակում հասարակական, ստեղծագործական ինչ խնդիրներ են կանգնած եղել սովետահայ վիպասանների առջև և ինչ լուծումներ են ստացել, ինչպիսի թերություններ են ուղեկցել մեր վիպասանությանը և որոնցից է նա ազատագրվել:

Ժողովածուն եզրավակվում է Ս. Բողոսյանի «Հեղափոխական արևելքի երգը» և Ն. Աղալյանի «Ժողովրդի ճակատագիրը ինքնակենսագրական վեպերում» հոդվածներով:

«Հեղափոխությունը և հայ գրականությունը» ժողովածուն խորացնում է հեղափոխության ու գրականության կապի վերաբերյալ եղած պատկերացումները և լրացնում է սովետահայ գրականությանը նվիրված ուսումնասիրությունների ցանկը: Սովետահայ գրականագետները շնորհագրաբար խատանք են կատարել մեր ժողովրդի հոգևոր մշակույթի վրա Հեղափոխության հեղափոխության թողած բազմակողմանի ազդեցությունը ուսումնասիրելու ուղղությամբ, ազդեցություն, որի ճիշտ բնութագրումը մեծապես կօգնի նաև բացահայտելու այսօրվա գրական շատ երևույթների արմատները:

Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Н. В. АРУТЮНЯН, *Новые урартские надписи Кармир-блур, Издательство Академии наук Арм. ССР, Ереван, 1966, 104 стр. + 26 табл., цена 86 к.*

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Կարմիր-բլուրի ուրարտական և արձանագրությունները, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1966, 104 էջ + 26 աղյուսակ, գինը 86 կ.*

1961—1963 թթ. ընթացքում Վանի թագավորության բազմահարուստ հուշարձանների թիվը համարվեց ևս մեկով: Թեյշերաիների հնադարյան քաղաքի միջնաբերդի վերին շերտերի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին ուրարտական առավել խոշոր տեքստերից մեկի ընդարձակ հատվածներ: Ենթադրում են, որ Թեյշերաիների ուրարտական տաճարներից մեկի շարվածքի բազմաթիվ սրբատաշ վեճերի վրա փորագրված այդ արձանագրությունը պարունակել է 22 տողանոց տեքստ՝ 3 մ 50 սմ ընդհանուր երկարությամբ:

Ոճով ու բովանդակությամբ ուրույն և ինքնատիպ ուրարտական այս բնագրի պահպանված հատվածների ընթերցմանը, մեկնաբանմանը և թարգմանությանը է նվիրված Ն. Վ. Հարությունյանի գրախոսվող աշխատությունը, որը կատարված է ժամանակակից արևելագիտության մակարդակի վրա և առաջնակարգ նշանակություն ունի ինչպես Թեյշերաիների քաղաքի, այնպես էլ Հայաստանի մշակույթի ուրարտական դարաշրջանի պատմության համար: Արձանագրության նշանակությունը բնագծով է նաև այն հանգամանքով, որ նրանում տեղ են գտել զայմ մե-

հայտ ուրարտական բառեր և բառակապակցություններ, որոնք թեև ոչ բոլոր դեպքերում են ենթարկվում ճշգրիտ մեկնաբանությունների, աշխուսմանային, զգալի շափով հարստացնում են ուրարտերենի բառային ֆոնդը և բերականական կառուցվածքը:

Արձանագրության առանձին հատվածների՝ հեղինակի կողմից առաջադրված թարգմանությունները, որոնք արված են Ուրարտուի վիմագրական ամբողջ նյութի ուսումնասիրության հիման վրա, համոզիչ ձևով ցույց են տալիս, որ Ռուսա II (Արգիշտիի որդի) թագավորը իր դահակայության առաջին տարիներին (մ. թ. ա. 685—645 թթ.) ուրարտական պանթեոնի դերագույն աստվածների՝ Խաչդի, Թեյշերայի, Շիվիների, դերագույն աստվածուհի Ուարուրանի (Խաչդի կիներ), ինչպես և տեղական (Ազա երկրի) աստված Եւարշայի պատվին Թեյշերաիների քաղաքում կառուցել է հինգ հույկապ տաճարներ: Նոր արձանագրության սույն տվյալները հաստատում են այդ սրբազան քաղաքի միջնաբերդի երկրորդ հարկում պեղումներով ի հայտ բերված խիստ ամրացված հարթակների առկայու-